

# ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՈՒՀԻ ԲԱՂՄԱՆՅԱՆ

## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱԹԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

*Բանալի բառեր – Ն. Ադոնց, Հ. Աճառյան, հայ, ծաթ, գնչու-ցիգան, հնդիրանական ցեղ, հայ քաղկեդոնականություն, սոնթ, զոտոտ, զուտոտ, ծագումնաբանություն*

Հայ պատմիչները վկայում են *ծաղ* կամ *ծաթ* անունով ինչ-որ ժողովրդի մասին, որի ծագումը ցայսօր առեղծված է: Ծաթերի առաջացման հանգամանքները և նրանց կապը հայերի հետ իսկապես հետաքրքրական են, որովհետև նրանք որոշ առնչություն ունեն հայ եկեղեցու դավանաբանական հոսանքներից մեկի հետ:

Պատմական հակադիր վկայություններ կան ծաթերի՝ հայ լինել-չլինելու հարցի վերաբերյալ: Ըստ դրանցից մի քանիսի՝ ծաթերն առանձին ժողովուրդ են՝ հայերից զանազանվող, ըստ այլ վկայությունների՝ ծաթ-ը հայ քաղկեդոնականների մականունն է:

Ծաթերի մասին առաջին անգամ վկայում է Ուխտանեսը X դարում, սակայն, ինչպես ուսումնասիրողներն են փաստում, նրա պատմության՝ ծաթերին նվիրված հատվածը մեզ չի հասել: Ծաթերի մասին տեղեկություններ պահպանվել են միայն հեղինակի ընծայականում, որտեղ նա, դիմելով Անանիա Նարեկացուն, որի խնդրանքով գրել է իր աշխատությունը, նշում է, որ վրաց բաժանման պատմությունից հետո պիտի պատմի նաև *ծաղ* կոչվող ազգի մկրտության մասին: Այդ խնդրին հեղինակն անդրադարձել է իր գրքի երրորդ մասում, որը մեզ չի հասել: Ընծայականում նա մասնավորապես գրում է. «Եւ զամենայն կարգել մի ըստ միոջէ ըստ իւրաքանչիւր խորհրդոց: Նախ զթիւ թագաւորաց եւ հայրապետաց մերոց, եւ զբաժանումն Վրաց ի Հայոց միաբանութենէ եւ յետ այնորիկ զՄկրտութիւն ազգին որ Ծաղն կոչի, նաեւ զգաւառս եւ զգեղս զլիաւորս, եւ զքաղաքս եւ զբերդս իւրաքանչիւր գաւառօք որ են յաշխարհին յայնմիկ, որպէս եւ կամք քո հրամայեցին, եւ զվանօրայս հանդերձ վանականօք անուամբ իւրաքանչիւրոց, եւ զանապատս միայնաւորաց...»<sup>1</sup>:

Հարցի քննությամբ զբաղված հայագետ, բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի վկայությամբ, Ուխտանեսից բացի, ծաթերի պատմությունը քննել է

---

<sup>1</sup> **Ուխտանես**, Պատմութիւն Հայոց եւ Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 14:

նան Պողոս Տարոնեցին, որը, նրա հաղորդմամբ, անձանոթ էր Ուխտանեսի պատմության՝ ծաթերին վերաբերող հատվածին: Դա թույլ է տալիս ենթադրել, որ վերոնշյալ հատվածն անհետացել է ավելի վաղ՝ մինչև Պողոս Տարոնեցու՝ ասպարեզ գալը, այն է՝ XII դարից առաջ: Ըստ Ն. Ադոնցի՝ սա է պատճառը, որ հետագա հեղինակները գրեթե ոչինչ չգիտեն ծաթերի մասին, իսկ եղած տեղեկությունները հիմնվում են լուրջ ենթադրությունների վրա:

Ծաթերի մասին մեր ձեռքի տակ եղած տեղեկություններն ընդհանրացնելով՝ տեսնում ենք, որ ուսումնասիրողների մի մասն ընդունում է ծաթերի՝ առանձին ազգ լինելու հանգամանքը. նրանք հետագայում ձուլվել են այս կամ այն ազգին, մյուս խումբը չի ընդունում նրանց նախնական առանձին ազգությունը՝ նշելով, որ նրանք նույնն են, ինչ ծավդեացիները:

Այսպես, Մխիթար Այրիվանեցին XIII դարում ծաթերին նույնացնում է ծավդեացիների հետ. «Յաւուրս տէր Դաւթի (828-853) Գարաման քահանայ Կակաղեցի որոշեալ ի Հայոց ի Վիրս դարձոյց զԾոնդեացիսն, այս է Ծաղն, որ կան այժմ ի Հռոմս»<sup>1</sup>:

Մխիթար Այրիվանեցու այս տեսությունը, կարծում ենք, այնքան էլ արժանահավատ չէ, քանի որ ծողեացիք քրիստոնյաներ էին և IX դարում վրաց եկեղեցու կողմն անցան, մինչդեռ ծաթերը միայն X դարի վերջերին քրիստոնյա դարձան: Նշանակում է՝ հստակորեն պետք է սահմանազատվեն *ծաթ* և *ծողեացի (ծավդեացի)* եզրերը՝ որպես տարբեր ցեղանուններ:

Ծողեացիք, ըստ Ն. Ադոնցի, բնակվում էին Հայաստանի սահմաններում՝ աղվանների երկրին կից, և հայտնի էին դասական հեղինակների երկերից *sodi* անվամբ:

Ծաթերին ու ծողեացիներին առանձին ցեղեր է համարում նաև Նիկողայոս Մառը, ըստ որի՝ ծաթերը հայ քաղկեդոնականներն են: Հապացույց իր այս տեսության՝ նա Ուխտանեսի վկայության *ծաղ* գրությունը բացատրում է որպես մի նոր շտկում՝ ծաղերին ծողեացիներին նույնացնելու հետագա փորձի վրա հիմնված, և անվարան փաստում է, որ Ուխտանեսի գրության մեջ խոսքը ոչ թե ծաթերի, այլ ծողեացիների մասին է: Ըստ նրա՝ Ուխտանեսի պատմության նշյալ հատվածի անհետացումը պատահական չէ, այլ կապված է ծաթերին որպես օտար ներկայացնելու հեղինակի ձգտման հետ<sup>2</sup>:

Ն. Մառի վերջին պնդումը, կարծում ենք, հավանական է, հատկապես եթե նկատի ենք ունենում Ուխտանեսի գրության հատվածի անհետացմանը վերաբերող, երկրորդական թվացող, բայց շատ կարևոր այլ փաստեր: Գրիգոր Նարեկացուն մեղադրում էին թոնդրակյան աղանդի հետևորդ լինելու մեջ, բայց շրջանառվում է նաև այն տեսակետը, թե նրան սխալմամբ են թոնդրակյան աղանդի հետևորդ կարծել, թե նա «ծաթ» աղանդի հետևորդն

<sup>1</sup> Այրիվանեցի Մ., Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 85:

<sup>2</sup> Տե՛ս Մառ Ն., Արքաուն. քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Երևան, 2016, էջ 45:

էր, որը նույնն էր, ինչ հայ քաղկեդոնականությունը: Առաջադրված այս վարկածն ուշագրավ է ծաթ աղանդի՝ Արևմտյան Հայաստանում տարածված լինելու իրողությունը մեկնելու և Ներսես Ակինյանի՝ ծաթերի մկրտության վայրը Կիլիկիայում տեղադրելու տեսակետը հասկանալու առումով: Ծաթերի՝ Արևմտյան Հայաստանում սկզբնապես հայտնվելու և այնտեղ բնակություն հաստատելու նախնական վարկածը լիովին հաստատվեց, երբ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»<sup>1</sup> տեղ գտավ Արևմտյան Հայաստանի Էրզրումի վիլայեթի Երզնկայի գավառում *Ծաթեր* անունով գյուղը, որի բնակիչները՝ քրիստոնյա հայեր, եղեռնի ժամանակ տեղահանվել են: Այս փաստը շատ խոսուն է մի կողմից ծաթերի՝ Հայաստանում իրապես գտնվելու, մյուս կողմից՝ հայերին ձուլված, անգամ իրենց անունով գյուղ հիմնած լինելու առումով: Բայց նույնանուն գյուղ կա նաև Լոռու մարզում՝ Ալավերդուց տասնմեկ կիլոմետր հարավ, Դեբեդի բարձրադիր ձախ ափին, որտեղ գտնվող երկու եկեղեցիները կառուցված են հենց XI-XIII դարերում: Ծաթերի՝ Արևմտյան Հայաստանում գտնվելու մասին է վկայում նաև Ն. Ակինյանի հետևյալ վկայությունը. «Աչք է պետք չէ հեռացրնել այն պարագան ալ որ պատմագիրն (Ուխտանես-ընդծումը մերն է) կը խոստանար թուարկել նաեւ զվանորայսն հանդերձ վանականօք եւն, բան մը, որ լիով կը ճշգրտուի Կիլիկեան Հայաստանի համար...»<sup>2</sup>:

Մխիթար Ապարանցին, նշելով Հայաստանում եղած զանազան աղանդների և հերետիկոսական ուսմունքների պատմության մասին, հիշատակում է նաև ծաթերին. «...քանզի ոմանք կոչին Մոնթ, ըստ Սըասցոց կոչելոյն եւ բարբառոյն, որ ասի Բաժանեայք կամ թափեայք. վասն զի բաժանեալ թափեցան ի Սըսոյ միաբանութենէն որ ընդ Սուրբ եկեղեցոյ: Եւ ոմանք կոչին Ծաթ Հայեր, որ լեզուով եւ հրով ազգաւ են Հայք, բայց դավանութեամբ եւ ամենայն օրինօք են Յոյնք... ոմանք ի Յունաց եւ ոմանք ի Հայոց, որք մերձակայք են այնմ գաւառին (Կեսարիո) եւ երկրին, որք կոչին Ծայթ Յոյնք եւ Ծայթ Հայքն ընդ նոյն Յունաց, եւ յոյժ նոյն ատեն եւ բամբասին զՀայսն, որք ոչ հաւանին վերոյգրեալ աղանդեացն միայն լեզուով եւ գրով են Հայք, եւ այլոց ամենայնի միաբան ընդ նոյն Յունաց»<sup>3</sup>:

Կարծում ենք՝ չի կարելի անտեսել այն փաստը, որ Մխիթար Ապարանցու երկում հիշատակվում է ոչ միայն ծաթ-հայերի, այլ ծաթ-հույների մասին, հետևաբար ծաթերի հարցը չի փակվում միայն հայ քաղկեդոնականներով:

Ծաթ-հայերի մասին է գրում նաև Ն. Ակինյանը՝ Ուխտանեսի գրության «ծաղ»-երին նույնացնելով «ծայթ» հայերի հետ. «Ուխտանեսի ակնարկած

---

<sup>1</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևան, 1986-2001:

<sup>2</sup> **Ակինեան Ն.**, Կիրիոն կաթողիկոս վրաց. պատմութիւն հայ-վրական հարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, Վիեննա, 1910, էջ 80:

<sup>3</sup> Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 537:

«Ծաղ ազգն» նոյն է բոլորովին «Ծայթ» հայերու հետ, ազգ կոչուած է շէշտելու համար պարգապէս Ծայթերու բազմութիւնը»<sup>1</sup>:

Ն. Ադոնցի համոզմամբ, սակայն, «ծայթ»-ը ազգային տերմին է՝ համաձայն Ուխտանեսի նոյն վկայության: Այս անվանման մեջ, ըստ նրա, չի կարելի չնկատել այն ազգության անունը, որ հիշվում է արաբ հեղինակների երկերում՝ *qunus* կամ *qanus* ձևերով: IX դարում գատերը (ռուսերեն բնագրի ուղղագրությամբ) բնակվում էին Անազարվայի սահմաններում արաբ-բյուզանդական սահմանագլխին: Նրանք համարվում են Եվրոպայում և Ասիայում այսօր ցրված գնչու-ցիգանների նախնիները: Ըստ պատմագիրների՝ նրանք եկվորներ են Հնդկաստանից և պատկանում են Հինդոսի ստորին հոսանքում բնակվող բազմաթիվ ցեղերի թվին: Այստեղից նրանք գաղթել են Միջագետք և ցրվել ավելի հեռու՝ Արևմտյան Ասիա և այլ երկրներ:

Ն. Ադոնցը, որ հետամուտ չի լինում այն ուշագրավ հարցին, թե ինչ կապ ունեն ծայթերը, այսպես կոչված, հայ գնչու-ցիգանների հետ, որ կոչվում են *բօշա*, մեջբերում է, սակայն, ցիգանների լեզուն հետազոտողների հիշատակած մի քանի բառեր, որ պատահում են ցիգանական բոլոր բարբառներում, դիցուք՝ *choro*=խոր, *kotor*=կտոր, բեկոր, *handako*=խրամ, քանդակ և այլն: Այս բառերի բացատրությունը հետազոտողները փորձում են գտնել արաբերենում, մինչդեռ դրանք կան հայերենում, այն էլ՝ նոյն նշանակությամբ: Եվ Ն. Ադոնցը մեջբերում է ցիգանական լեզվի ուսումնասիրող Քերովրե Պատկանովի եզրակացությունը. «Գուցե հայ ծայթերը և սոնթերը, նրանք, որ ապրում էին Կիլիկիայում, հայ թագավորության կործանումից հետո շարժվեցին դեպի կայսրության մայրաքաղաքը և այնտեղից ցրվեցին արևմտյան Եվրոպայի զանազան երկրները... Եվ եթե ոչ ծայթերի միջոցով, համենայն դեպս, նրանց միջնորդությամբ են մտել հայ բառերը եվրոպական ցիգանների բարբառների մեջ...»<sup>2</sup>:

Ն. Ադոնցը գրում է. «Ոչ միայն հնչյունաբանական, այլև իրական-պատմական տեսակետից ծայթերի և գատերի համադրությունը չի կարող հակաճառության հանդիպել: Վեճ և տարբեր կարծիք կարող է լինել միայն այն հարցի վերաբերմամբ, թե ե՞րբ և ինչպե՞ս են ընկել նրանք Հայաստան և ո՞ւր էին կենում Ուխտանեսի օրով...»<sup>3</sup>: Ըստ նրա՝ ծայթերը հաստատվեցին Հայաստանի սահմաններում իրենց մկրտությունից (X դար) շատ ավելի վաղ և թերևս հայերի հետ ձուլվելու ճանապարհի վրա դարձել էին հայախոս, թեև նրանց լիովին հայացումը կատարվել է քրիստոնեություն ընդունելուց հետո կամ գուգաղիպել է մկրտությանը:

Ըստ Ն. Ադոնցի, փաստորեն, գրեթե անկասկած է, որ գատերը հենց այն ժողովուրդն են, որի մասին խոսում են հայ պատմիչները՝ նրանց *ծայթ* կամ

<sup>1</sup> Ալիևեան Ն., նշվ. աշխ., էջ 79:

<sup>2</sup> Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 546:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 543:

ծաղ կոչելով: Այս անունը, ըստ գիտնականի, Հինդի ավերին հնչում էր jat: Հնդկական ջատ-ը պարսիկ-արաբական հողի վրա դարձել է գատ: Հայկական ձևը՝ *ծայթ*, նրա ենթադրությամբ, ընդհանուր է նաև Ասորիքի և Միջագետքի համար. հնչյունաբանական տեսանկյունից ջ-ի՝ գ, և գ-ի՝ ծ հնչյունափոխությունն օրինաչափ երևույթ է:

Հրայյա Աճառյանը *գատ* բառը մեկնում է իբրև *գ* նախադրիվ *հատ* և հավելում, որ պահլավերենում կա *ջատքար* բառը՝ «անջատ» ձևից<sup>1</sup>: Նրա դիտարկումը, մեր կարծիքով, թույլ է տալիս *գատ* (գոտ, գուտ) ցեղանունը աղերսել հայերեն *գատ՝ առանձին, մեկուսի* բառի հետ՝ այդու *գատ* և *ծայթ* բառերը դիտելով իբրև միևնույն *անջատական, հերձվածող* իմաստն արտահայտող լեզվական տարբերակներ, հատկապես որ Գևորգ Ջահուկյանը և Հ. Աճառյանը սոնթ-ը ստուգաբանում են որպես «կրօնապես բաժանեալ, հերձեալ»<sup>2</sup>: Բացի այդ, գրեթե կասկած չի հարուցում, որ *անջատ* բառի վերջին *-ջատ* բաղադրիչը նույն *գատ*-ն է՝ Ն. Ադոնցի ներկայացրած *ջ>գ* հնչյունափոխությամբ:

Թվում է՝ Հ. Աճառյանի այս ստուգաբանության հետ է կապված Մխիթար Ապարանցու այն վկայությունը, որտեղ նա, պատմելով ծաթերի մասին, հայտնում է, որ հայ քաղկեդոնականներից մի քանիսը կոչվում են *սոնթ*, որը, նրա կարծիքով, նշանակում է *հերձվածող, անջատական*: Բայց այս թյուրիմացությունը կանխարգելում է Ն. Ադոնցը՝ մերժելով Մխիթար Ապարանցու վերոնշյալ բացատրությունը, ինչպես նաև *ծայթ* բառի մեկնությունը՝ որպես կիսատ, անբավարար անուն, որ տվել են հայ քաղկեդոնականներին: Ըստ Ն. Ադոնցի՝ *սոնթ* բառն անկասկած կապ ունի *sinte* անվան հետ, ինչպես գնչուցիզաններն են իրենց կոչում: Սա, Ն. Ադոնցի ենթադրությամբ, նույնն է *sindi* հնդկական ցեղի անվան հետ, որին ազգակից են և ծաթերը: Միով բանից, *sont*, *sinte* ձևը մեկն է գատ-ցիզանների ինքնանվանումներից:

*Սոնթ* անվան ստուգաբանության հարցում Հ. Աճառյանը թեպետ համակարծիք է Ն. Ադոնցին, սակայն *ծայթ*-ը ստուգաբանում է որպես նախատական բառ՝ «հավատքի մեջ թերի կամ ազատամիտ» նշանակությամբ<sup>3</sup>:

Ռուս բանասեր, պատմաբան Ալեքսանդր Պոդոսինովը *սինդի* անունով ցեղի տեղակայման մասին գրում է, որ նա գտնվում էր Թամանի թերակղզում՝ Ազովի և Սև ծովերի միջև ընկած տարածքում<sup>4</sup>:

Գերմանացի գիտնական Կառլ Ֆունկեն այս առիթով գրում է, որ սինդի ցեղը բնակվում էր Սև ծովի հյուսիսային սահմաններում: Այս ցեղի մասին գրում են Հերոդոտոսը և ավելի ուշ շրջանի պատմիչներ՝ նրանց երկիրն ան-

<sup>1</sup> Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, հ. 2, էջ 82:

<sup>2</sup> Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 687, **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1962, հ. 2, էջ 442:

<sup>3</sup> Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 82:

<sup>4</sup> Տե՛ս **Podossinov A. V.**, Das Schwarze Meer in der geokartographischen Tradition der Antike und des frühen Mittelalters. II. Die Halbinsel Krim, das Asosche Meer und die Straße von Kertsch, Ancient West and East, Vol. 3, n° 2, S. 450:

վանելով «Land Sindise»՝ Մինդիս երկիր<sup>1</sup>: Իսկ գերմանացի պատմաբան, աշխարհագետ Կոնրադ Մաններտը հույների և հռոմեացիների աշխարհագրությանը նվիրված իր աշխատության մեջ վկայում է *սինդի* անվան *Ցինգի* տարբերակը նույնպես<sup>2</sup>, որը փաստացի լավագույն ապացույցն է Ն. Ադոնցի ենթադրության, ըստ որի՝ գնչու-ցիգանների ինքնանվանումներից մեկը *սինդի* է:

Ն. Ադոնցի վկայությամբ՝ Ֆիրդուսին պատմում է, որ ծաթերին՝ իբրև լավ երաժիշտների, Հնդկաստանից բերել է տվել (12 հազար մարդ և կին) Վռամ V թագավորը (420-448): Այս մասին պատմում է նաև Գամգա Իսփահանցին, որն ապրել է Ֆիրդուսուց առաջ: Այդ ավանդությունների ճշտությունը, Ն. Ադոնցի համոզմամբ, դժվար է ստուգել, սակայն ստույգ է, որ զատերին հանդիպում ենք Բասրայում արդեն VII դարում:

Գերմանացի լեզվաբան Հայնրիխ Գրելմանը ցիգանների հայրենիքը համարում է Հնդկաստանը, իսկ նրանց անցումը Հնդկաստանից դեպի տարբեր երկրներ բացատրում է Թիմուր-բեկի՝ XIV դարում Հնդկաստանի վրա հարձակմամբ, որի հետևանքով «ավազակների» մի խումբ՝ «ցիգան» անունով, մոտ կես միլիոն թվաքանակով, փախչում է Հնդկաստանից<sup>3</sup>:

Ռուս լեզվաբան Նիկոլայ Բեստունովը նույնպես ընդունում է ցիգանների հնդկական ծագումը հատկապես լեզվաբանական տեսանկյունից: Նրանց լեզուն և սանսկրիտը, ըստ նրա, միմյանց շատ մոտ են<sup>4</sup>:

*Ծայթ* անունը Ղևոնդ Ալիշանը մեկնաբանում է որպես ածանցում *ծըթոհլ* բայից, որը նշանակում է *աւերուել*<sup>5</sup>:

Խոսելով ծաթերի մասին՝ չենք կարող առանձնակի չանդրադառնալ նրանց մկրտության և ընդհանրապես հավատքի հարցին: Մխիթար Այրիվանցու ծաթերի մասին վկայության մեջ ակնհայտ է, որ նրանց կրոնափոխությունն իրենց կամքին հակառակ է եղել: Նա գրում է. «Յաուրս տեր Դաւթի (828-853) Գարաման քահանայ Կակաղեցի որոշեալ ի Հայոց ի Վիրս դարցոյց զԾոնդէացիսն, այս է Ծադն, որ կան այժմ ի Հռոմս»<sup>6</sup>:

Ազգագրագետ Հրանտուշ Խառատյանը նույնպես փաստում է բռնի կրոնափոխության մասին՝ գրելով. ««Ծաթ» կամ «հռոմ հայերը» Դերսիմում՝ տեղական բնակչության կրոնական հանդուրժողականության այս տարածքում, ավելի տևական են պահել իրենց էթնիկությունը, չեն հունացել, չնայած հունական բնակչության առկայությանը: Ավելի հավանական է, սակայն, որ

<sup>1</sup> Sté u **Funke C. Ph.**, Neues Real-Schullexikon: enthaltend die zur Erklärung der alten Klassiker notwendigen Hilfswissenschaften vornämlich Geographie, Geschichte, Philosophie, Alterthümer und Mythologie, T. 5, Braunschweig, 1805, S. 339:

<sup>2</sup> Sté u **Mannert K.**, Geographi der Griechen und Römen aus ihren Schriften, Leipzig, 1820, T. 4, S. 355:

<sup>3</sup> Sté u **Grellmann H.**, Die Zigeuner, Dessau-Leipzig, 1783, S. 37:

<sup>4</sup> Sté u **Деметр Н., Бессонов Н., Кутенков В.**, История цыган. Новый взгляд, Воронеж, 2000, с. 3:

<sup>5</sup> Sté u **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 552:

<sup>6</sup> **Այրիվանցի Մ.**, նշվ. աշխ., էջ 69:

մեզ հետաքրքրող տարածքում հարկադրական դավանափոխություն չի եղել, և նրանք վերաբնակներ են, որ նախընտրել են թե՛ հունական, թե՛ հայկական կշտամբանքից ազատ Դերսիմի տարածքը»<sup>1</sup>:

Ն. Մառը կարևոր մեջբերումներ է կատարում Նիկոն Սևեռնցու «Տակտիկոն»-ից՝ ծաթերի նկատմամբ կրոնական ստիպողականության մասին վկայող: Այսպես, այս «Տակտիկոն»-ում երեք փաստաթուղթ կա ծաթերի մասին՝ «Անտիոքի պատրիարքի ուղերձի կրկնօրինակը՝ ուղղված Երուսաղեմի պատրիարք Եվթիմիոսին», «Նույն պատրիարքին ուղղված ուղերձի պատճենը՝ ուղարկված Մբ. Սիմեոն Հրաշագործի վանքից» և «Նիկոնի թուղթը հայր Գերասիմին՝ ևս ուղարկված Երուսաղեմ»: Առաջինում կարդում ենք. «Ումանք ամեն կերպ հարձակվում են նրանց (ծաթերի, հայերի) վրա, բարին ատող սատանայի դրդմամբ որպես ոչ ուղղափառների և վիրավորում են նրանց ամեն ձևով: Մինչդեռ նրանք ընդունված են եղել մեր նախորդ պատրիարքների կողմից...»<sup>2</sup>:

Երկրորդ փաստաթղթում նույն միտքն է զարգացվում, իսկ երրորդում Նիկոն Սևեռնցին գրում է. «Այս մեր եղբայրները ծաթ են անվանվում, որտեղ էլ որ հայտնվում կամ բնակվում են, ամենուրեք փորձության են ենթարկվում՝ Քրիստոսի շնորհիվ անբիժ մնալով իրենց հավատի մեջ...»<sup>3</sup>:

Նիկոն Սևեռնցու փաստարկը, թե նրանք իրավունք ունեին Աստծու շինած եկեղեցում կանոնը հայերեն երգելու, ինչպես նաև Ֆիրդուսու վկայությունը, թե նրանք երաժիշտ էին, կարծում ենք, տակավին ապացույց չեն նրանց հայ լինելու: Կանոնի հայերեն կատարումը զարմանալի չէ, որովհետև փաստ է, որ այդ ազգը եղել է Հայաստանում, ինչպես Եվրոպայի ու Ասիայի բազմաթիվ երկրներում: Դրա ապացույցն է նաև նրանց բառապաշարում հայկական բառերի գոյությունը, որ ոմանք փորձում են բխեցնել արաբերենից, ոչ թե հայերենից՝ չնայած այդ բառերի՝ հայերենում նույն կազմությանն ու իմաստին:

Ըստ ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեի՝ ծաթերը հայերից առանձնացված էին բարոյադավանական հիմքերով: Նրանք սովորաբար կոչվում էին *ծաթ*, և սա վիրավորական անվանում էր, որը տարբեր կերպ էր ստուգաբանվում. մի կողմից այն նշանակում է *փոքր*, մյուս կողմից՝ *թոշնած* կամ *անկատար*: *Ծայթ* նշանակում է *հայ քաղկեդոնական*, այսպես սասած, *թզուկ*, այսինքն՝ մի մարդ, որն անկարող է, անընդունակ և միաժամանակ, ըստ նրա, և՛ հույն է, և՛ հայ<sup>4</sup>:

---

<sup>1</sup> **Խառատյան Հ.**, Դերսիմի էթնո-կրոնական բազմազանությունը և դերսիմցիների շարունակական այլախոհությունը: Հեղինակի տրամադրած ձեռագիրը:

<sup>2</sup> **Մառ Ն.**, նշվ. աշխ., էջ 49:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>4</sup> Sté u **Mahé J.-P.**, Confession religieuse et identité nationale dans l'église arménienne du VII<sup>e</sup> au XI<sup>e</sup> siècle. Des parthes au califat quatre leçons sur la formation de l'identité arménienne, Momographies 10, Paris, 1997, p. 59:

Փորձելով պարզել ծաթերի մկրտության վայրը՝ Ն. Ակինյանը վկայակոչում է Ասողիկի այն վկայությունը, թե 986-1000 թթ. Սեբաստիայի հայությունը խիստ հավածանքների էր ենթարկվում. «Այլ յորժամ էր ի Բաղդաս թագաւորն Վարդ և խաղաղանայր թագաւորն Վասիլն՝ կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն... Եւ կանացի հովիւքն և մետրապօլիտն՝ Սեբաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ...»<sup>1</sup>: Ըստ նրա՝ Կիլիկիան շատ ավելի հավանական տեղ է ծաթերի մկրտության համար, որովհետև, ինչպես Ասողիկն է վկայում, Հայոց Խաչիկ հայրապետի օրոք հայերը սփռվեցին արևմուտքում «մինչև ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց և ի Տարսն Կիլիկեցոց և ի Սուլվդայ և յամենայն գաւառսն յայնոսիկ»<sup>2</sup>:

Մյուս կողմից չէ՞ որ նրանք հեթանոսներ չէին, ինչո՞ւ պետք է մկրտվեին: Այս հարցին դարձյալ Ն. Ակինյանն է պատասխանում՝ գրելով, որ Ուխտանէսի գործածած «մկրտություն» բառը կարող է թյուրիմացության հիմք դառնալ՝ կարծել տալով, թե ծաթերի՝ իբրև հեթանոսների մասին է խոսքը. «Ժամանակակից հայ կաթողիկոսաց (Անանիա Մոկացոյ, Խաչկայ) եւ եկեղեցականաց անհանդուրժող աստուածաբանութիւնն անվաւեր նկատած էր քաղկեդոնականներու մկրտութիւնը. եւ Անանիա իրեն խորհրդակից աստուածաբան վարդապետներով սահմանած էր սրականապէս կրկին մկրտել դարձող քաղկեդոնականները (Օադերը)»<sup>3</sup>:

Ն. Ադոնցի կարծիքով, ծաթ հայերի՝ Հայոց եկեղեցուց դեպի քաղկեդոնականություն անցումը կատարվեց, հավանաբար, Բագրատունյաց թագավորության թուլացման և վերջնական անկման շրջանում: Այդ ժամանակ Հայաստանում գոյություն ուներ հայ եկեղեցուն կից նաև քաղկեդոնական մի համայնք, որն ընդգրկվում էր կայսերական եկեղեցու կազմում: Դավանաբանական վեճերի պատճառով ծաթերը X դարից հետո անջատվեցին իրենց հավատքից և միացան հայ քաղկեդոնականներին ու հոռոմներին: Ն. Ադոնցը որոշ առումով ճշմարիտ է համարում Պողոս Տարոնեցու այն միտքը, թե ծաթերը կապվում են այն հայերի հետ, որոնք հունական հավատքին հավատարիմ մնացին 726 թ. դավանական հեղաշրջումից հետո, և սա, փաստորեն, ծաթերի ծագումն է ըստ դավանության, ոչ թե ըստ ցեղի:

Օաթերի ծագմանն առնչվող հարցում, կարծում ենք, չպետք է տարանջատել դավանաբանական և ազգային հիմքերը, որովհետև միայն դավանանքով ազգային պատկանելությունը որոշել չի կարելի, և հակառակը՝ ազգային պատկանելությունը դավանական պատկանելության մասին ոչինչ չի վկայում:

<sup>1</sup> **Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 201:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 258:

<sup>3</sup> **Ակինեան Ն.**, նշվ. աշխ., էջ 80:



Այնուամենայնիվ, Ն. Ադոնցի կարծիքով, ծաթը ազգություն նշանակող տերմին է, և այդ անվանման մեջ անհնար է չնկատել այն ազգության անունը, որ հիշատակվում է արաբ հեղինակների գործերում՝ *զուտ* կամ *զուտտ* անվամբ: Այս ընդհանրությունն ապացուցելի է ոչ միայն հնչյունաբանական, այլև պատմական տեսանկյունից: Վիճահարույց է միայն այն հարցը, թե ե՞րբ և որտեղի՞ց նրանք եկան Հայաստան և որտեղ էին ապրում քրիստոնեություն ընդունելու շրջանում: Ն. Ադոնցը ենթադրում է, որ նրանք Հայաստանում հաստատվեցին իրենց մկրտությունից շատ ավելի վաղ՝ X դարավերջին: Նրանք արդեն հայերի հետ ձուլման ճանապարհին էին, յուրացրել էին նրանց լեզուն, թեև նրանց լիովին հայացումը կատարվել է հավանաբար քրիստոնեություն ընդունելուց հետո կամ զուգադիպել է մկրտությանը:

Ամփոփելով նշենք մեր եզրակացությունները.

Ա) Գոյություն է ունեցել մի ազգ՝ ճգնակենցաղ անապատականներից կազմված: Այդ ազգը հայերեն կոչվել է *ծաթ* կամ *ծաղ*, արաբերեն՝ *զուտ* կամ *զուտտ*: Ուղղափառ չլինելու պատճառով նրան հավածել են: Այդ ազգի՝ քաղկեդոնական լինելն անկասկած է, և վիճահարույց է միայն նրա՝ հայերի հետ ունեցած առնչությունը:

Բ) Ծաթերի՝ հայ քաղկեդոնականների հետ ունեցած առնչությունը սահմանափակվում է, ըստ էության, նրանով, որ X դարից հետո ծաթերն անջատվեցին իրենց հավատքից և միացան հայ քաղկեդոնականներին: Իսկ հայ քաղկեդոնականներին տրվող *սոնթ* անվանումը հենց նրանցից է եկել, ոչ թե հակառակը՝ հայ քաղկեդոնականներից տարածվել նրանց վրա: Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ *զուտ*, *սոնթ* և *ծաղ*՝ միևնույն *անջատական, հերձվածող* իմաստի լեզվական տարբեր դրսևորումներն են, այսինքն՝ տվյալ ազգը, որ ձուլվել է հույներին և հայերին, իսկապես հերձվածող է եղել, անջատական:

Գ) Ուսումնասիրողների տեսությունները, սկզբնաղբյուրների սակավությամբ պայմանավորված, հիմնված են լոկ ենթադրությունների վրա, բայց սկզբնաղբյուրների պակասը կարելի է լրացնել պատմահամեմատական և լեզվաբանական մեթոդների օգնությամբ, որոնց օգնությանն է դիմել Ն. Ադոնցը, ապացուցելով ծաթերի՝ *sinte* ինքնանվանումով գնչու-ցիգաններ լինելը:

Դ) Ծաթերի՝ առանձին ազգ լինելու մասին վկայում է այն փաստը, որ տարբերակում էին ծաթ հայերին ծաթ հույներից, այսինքն՝ նրանց մի մասը ձուլվել է հայերին, մյուս մասը՝ հույներին՝ ամբողջովին կորցնելով ազգային դիմագիծը և մնալով պատմական մշուշում:

Ե) Ծաթերի՝ առանձին ազգ լինելու և մոտավորապես X դարում Արևմտյան Հայաստանում, ինչպես և Արևելյան Հայաստանի հյուսիսում, ի մասնավորի՝ Լոռու մարզում տեղակայվելու փաստերն անժխտելի են մի կողմից Գրիգոր Նարեկացու՝ ծաթ աղանդի հետևորդ լինելու վարկածով, մյուս կողմից՝ Ուխտանեսի պատմության՝ հենց ծաթերին (վստահաբար նաև Գրիգոր

Նարեկացուն) վերաբերող հատվածների անհետացման հանգամանքով և ի վերջո՝ *Ծաթեր* անունով երկու գյուղերի գոյությամբ:

Ձ) Լոռու մարզի Ծաթեր գյուղում XI-XIII դարերում հիմնված հայկական երկու եկեղեցիներն ապացույցն են այն իրողության, որ ծաթերը, այն է՝ երբեմնի գնչու-ցիգանները, քաղկեդոնականությանը հավատարիմ են մնացել մինչև նշյալ դարերը, որից հետո հայացել են կորցնելով ազգային դիմագիծը:

### **Վանուհի Բաղմանյան – Վկայություններ ծաթերի ծագման մասին**

Սույն աշխատանքի նպատակը «ծաթ» ժողովրդանվան ստուգաբանությունն է և այդ ժողովրդի կապը հայերի հետ: Փաստացի, ծաթերը ցիգանների նախնիներն են, քաղկեդոնականներ, որոնց մի մասը ձուլվել է հայերին, մյուս մասը՝ հույներին՝ կորցնելով ազգային դիմագիծը: Մի կողմից շեշտվում է, որ հայ ուսումնասիրողների տեսությունները հիմնված են լոկ էնթադրությունների վրա, մյուս կողմից պարզաբանվում է նրանց՝ Հայաստան տեղափոխվելու ուղղությունն ու ժամանակը:

### **Вануи Багманян – Свидетельства о происхождении цатов**

*Ключевые слова* – армянин, цат, циган, индо-иранское племя, армянский халкедонизм, сонт, зотт, зутт, этимология

Цель данной работы- этимологическое исследование племени цат и ее отношение с армянами. Фактически цаты-предки циган, халкедонцы, одна часть которых ассимилировалась с армянами, другая-с греками, теряя свой национальный облик. С одной стороны подчёркивается, что теории ученых, которые цатов считают армянами, основаны только на предположениях, с другой стороны поясняется направление и время их передвижения в Армению.

### **Vanuhy Baghmanyan – Evidences on the Origin of the Tsats**

*Key Words* – Armenian, tsat, greek, gipsy-tziganes, indo-iranian tribes, geneology, Armenian Chalcedonians

The work is based on the origin of Tsat tribe and their relation problems with Armenians. The facts revealed that tsats are the ancestors of gypsies: chalcedons, which partially assimilated with Armenians, Greeks completely losing their national identity. On one hand it is emphasized, that the theories of scientists, who considers tsat tribe Armenians are basically based on assumptions, and on the other hand illustrated the century of the process of assimilation with Armenians.

Ներկայացվել է 18.03.2021

Գրախոսվել է 30.03.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021